ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/108

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.06.2019թ. թիվ 09/712 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար վերելակի հորանի կառուցման /վերելակի տեղադրումով/ աշխատանքների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով կազմակերպվել և իրականացվել է «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Նշված գնման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. մայիսի 20-ի թիվ 2 որոշմամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. մայիսի 29-ի թիվ 3 որոշմամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Պ. Գաբրիելյանի կողմից 2019թ. հունիսի 4-ին «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Առաջարկի հետ միասին ստացվել է նաև մրցույթի նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նախահաշվային փաստաթղթերի ծավալները չեն համապատասխանում հրավերին կից նախագծային փաստաթղթերին, ինչպես նաև փաստացի կատարվող աշխատանքի ծավալներին:

«Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն անմիջապես դիմում է ներկայացել գնահատող հանձնաժողովի նախագահին, որով խնդրել է պայմանագրով նույնպես հստակեցնել կատարվելիք աշխատանքի ծավալները:

Ի պատասխան նշված դիմումի գնահատող հանձնաժողովը գրությամբ հայտնել է՝

1.վերելակի հորանի կառուցման /վերելակի տեղադրումով/ աշխատանքներն իրականացվելու են պայմանագրի նախագծով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի շրջանակներում՝ պահպանելով համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերի պահանջները:

2. եթե շինարարական աշխատանքների կատարման ընթացքում փաստացի կարձանագրվի և կհիմնավորվի, որ նախահաշվով նախատեսված ծավալները չեն համապատասխանում նախագծային փաստաթղթերով սահմանված ծավալներին, ապա կնքված պայմանագրում կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ՝ պահպանելով գնումների համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերի պահանջները.

3. Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև սույն թվականի հունիսի 18-ը ներառյալ, պայմանագիր չստորագրելու, Պատվիրատուին պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում կզրկվեք պայմանագիր ստորագրելու իրավունքից:

4. Պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում,Ձեր կազմակերպության տվյալները կտրամադրվեն լիազորված մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.06.2019թ. թիվ 09/712 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը հայտնել է, որ ամբողջությամբ առարկում է «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեմ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ենթակետի՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Սույն գործով շատ կարևոր է պարզել, թե «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն հրաժարվել է արդյոք օրենքով և հրավերով նախատեսված պայմաններ պարունակող պայմանագիր կնքելուց, թե ոչ, քանի որ միայն նման դեպքում կարող ենք խոսել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ընկերության գնահատմամբ երբևէ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին չի առաջարկվել կնքել օրենքով և հրավերով նախատեսված պայմաններ պարունակող պայմանագիր, ինչպիսի փաստը հիմնավորվում է ներքոհիշյալով.

Այսպես՝

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ:

Համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ:

Համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից,..:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 1-ին մասի՝ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները

Վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությունից և համակարգային վերծությունից հետևում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացրել և պարտավորվել է հրավերով նախատեսված, պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններին համապատասխանող անձի հետ կնքել պայմանագիր:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսդրության, այնպես էլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի անվերապահ պահանջն է, որ Պատվիրատուն օֆերտա անելիս, այլ կերպ ասած հրավեր հրապարակելիս հստակ սահմանի այն աշխատանքների ծավալը, անհրաժեշտ ռեսուրսները, նյութերի տեսակները և այլն, որոնց կատարման նպատակով հետագայում կողմերի միջև պետք է կնքվի պայմանագիր:

Տվյալ դեպքում ինչպես հայտնի է, գնահատող հանձնաժողովի քարտուղար Պ. Գաբրիելյանի կողմից 2019թ. հունիսի 4-ին «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Առաջարկի հետ միասին ստացվել է նաև մրցույթի նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նախահաշվային փաստաթղթերի ծավալները չեն համապատասխանում հրավերին կից նախագծային փաստաթղթերին, ինչպես նաև փաստացի կատարվող աշխատանքի ծավալներին:

«Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն անմիջապես դիմում է ներկայացվել գնահատող հանձնաժողովի նախագահին, որով խնդրել է պայմանագրով նույնպես հստակեցնել կատարվելիք աշխատանքի ծավալները, սակայն վերջինս անհիմն պատճառաբանություններով ըստ էության մերժել է դիմումը:

Այսինքն, ստացվում է, որ հրավերով պատվիրատուն սահմանել է էական պայմաններ, որից հետո, երբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից, պայմանագրի նախագծին կից ներկայացրել է այլ պայմաններ պարունակող նախահաշվային փաստաթղթեր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Տվյալ դեպքում «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ի կամքն ի սկզբանե ուղղված է եղել Հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան պայմանագիր կնքելուն և դա է եղել միակ պատճառը, որ վերջինս ակցեպտավորել է Պատվիրատուի օֆերտան:

Որևէ օրենքով նախատեսված չէ, որ Պատվիրատուն կարող է իրեն հարմար ձևով փոխել պայմանագրի պայմանները՝ անտեսելով պայմանագրի մյուս կողմի ԿԱՄՔԸ, որը վերջինս դրսևորել էր հայտը ներկայացնելիս:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են

բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում:

Այսինքն, ստացվում է, որ Պատվիրատուն բացահայտ չարաշահում է իր իրավունքները, իրականացնում է գործողություններ բացառապես «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին վնաս պատճառելու մտադրությամբ:

Նույն հաջողությամբ Պատվիրատուն կարող էր վերելակի հորանի կառուցման /վերելակի տեղադրումով/ աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգ հրավիրեր, սակայն վերջում փաստացի աշխատանքների կատարման ժամանակ ընտրված մասնակցին պարտավորեցներ կատարել լրիվ այլ աշխատանք: Միթե այստեղ կարելի է պնդել, որ մասնակիցն է հրաժարվել պայմանագիր կնքելուց կամ աշխատանքը կատարելուց, չէ որ ընդհակառակը Պատվիրատուն չի ցանկանում կնքել օրենքով և հրավերով նախատեսված պայմաններ պարունակող պայմանագիր:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ պարտավորությունը չի կարող կատարվել պարտատիրոջ կետանցի հետևանքով:

Այսինքն, ևս մեկ իրավական հիմնավորում, որ մասնակից «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն չի կարող համարվել կետանցող, այլ կերպ ասած պայմանագրի կնքումից հրաժարված անձ, քանի որ սկզբնական կետանց հենց թույլ է տվել Պատվիրատուն, այն է՝ մասնակցին ներկայացրել է հրավերով նախատեսված պայմաններից էականորեն տարբեր պայմաններ պարունակող պայմանագրի նախագիծ:

Ավելի քան ուշագրավ է այն հանգամանքը, որ Պատվիրատուն չի հերքում առկա անհամապատասխանությունը, սակայն պնդում է, որ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ստորագրի պայմանագիրը՝ առաջարկելով, որ եթե խնդիր առաջանա ապա աշխատանքների կատարման փուլում Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կփոփոխեն պայմանագրի էական պայմանները;

Այստեղ հարց է առաջանում, իսկ ինչո՞ւ առկա անհամապատասխանության պայմաններում, Պատվիրատուն չի ցանկանում շտկել թերությունները, միթե սա չի խոսում այն մասին, որ վերջինս նպատակը է հետապնդում վնաս պատճառել մասնակիցն:

Ամփոփելով վերոգրյալը Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից Ընկերությանը Հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի նախագիծ չի առաջարկվել, ինչը նույն է թե պայմանագրի նախագիծ ընդհանրապես չառաջարկելը:

Ուստի այստեղ անթույլատրելի է խոսել պայմանագրի կնքումից հրաժարվելու առավել ևս մասնակցին պատասխանատվության ենթարկելու մասին, քանի որ մասնակիցը պարտավորությունը պատշաճ կատարելու և պայմանագիր կնքելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր միջոցառումները և պայմանագրի կնքումը չի կայացել միայն ու միայն Պատվիրատուի մեղքով:

Ավելին, եթե այստեղ բացակայում է մասնակցի մեղքը, ապա բացակայում է նաև վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու հիմքը, քանի չհերքվող սկզբունք է, որ անձը կարող է պատասխանտվության ենթարկվել միայն ՄԵՂՔԻ առկայության պարագայում:

Համաձայն Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Ապավինելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներին և նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գրավոր դիրքորոշման մեջ ներկայացված բոլոր հիմքերը բխում են օրենքի տառից, իսկ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն որպես անկողմնակալ մարմին պարտավոր է բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն, ուստի Ընկերությունը խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/108 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.06.2019թ. թիվ 09/712 գրությամբ հայտնել է, որ 08.05.2019թ. Պատվիրատուի կարիքների համար համալսարանի մարզադահլիճի ծածկի և բացօթյա ամֆիթատրոնի վերանորոգման, Համալսարանի վարչական մասնաշենքին կից սպորտդահլիճի վերանորոգման, վերելակի հորանի կառուցման (վերելակի տեղադրումով) աշխատանքների ձեռքբերման նպատակով Armeps համակարգի միջոցով կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին հայտ է ներկայացրել նաև «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. թիվ 2 որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և հիմք ընդունելով Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը՝ 29.05.2019թ. թիվ 3 որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 29.05.2019-04.06.2019թթ.: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 04.06.2019թ. ընտրված մասնակցին հաձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին՝ կցելով պայմանագիր կքնելու առաջարկը, պայմանագրի նախագիծը, այդ թվում՝ ծավալաթերթ-նախահաշիվը:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում կատարված գործողությունների ամբողջ ժամանակահատվածում Ընկերության կողմից որևէ գրություն, առարկություն, հարցադրում կամ պարզաբանում չի ներկայացվել: Ի պատասխան Ընկերության կողմից 13.06.2019թ. ներկայացված գրության՝ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից 14.06.2019թ. ծանուցվել է ընտրված մասնակցին այն մասին, որ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի

նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև սույն թվականի հունիսի 18-ը ներառյալ, պայմանագիր չստորագրելու և Պատվիրատուին պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում Ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից և պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում, Ընկերության տվյալները կտրամադրվեն լիազորված մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ղեկավարվելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովում, գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. թիվ 4 որոշմամբ Ընկերությունը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/108 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/108 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/108 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.06.2019թ. թիվ 09/712 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 04.06.2019թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածներով սահմանված

պահանջներին համապատասխան ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն ծանուցմամբ Պատվիրատուն Ընկերությանն առաջարկել է ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը, պայմանագիրը՝ 2 օրինակից և դա ներկայացնելու գրությունը՝ կնքված և ստորագրված:

Պատվիրատուին ուղղված 13.06.2019թ. գրությամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը ստացել է Ընթացակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերը, որտեղից էլ պարզվել է, որ նախահաշվային փաստաթղթերի ծավալները չեն համապատասխանում նախագծային և փաստացի ծավալներին (շեղումները բավականին էական են):

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ վերջինիս կողմից չի կարող ստորագրվել մի փաստաթուղթ (պայմանագիր), որի անբաժանելի մաս կազմող նախահաշվային փաստաթղթի ծավալները փաստացի էականորեն շեղվում են նախագծային և փաստացի ծավալներից:

Ընկերությունը խնդրել է պայմանագրով հստակեցնել կատարվելիք աշխատանքների ծավալը:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրությանը՝ Պատվիրատուն 14.06.2019թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.05.2019թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է Ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը, և պայմանագրի նախագծում ներառվել է նաև տվյալ շինարարական աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, որը հրավերի և հայտարարության հետ միասին հրապարակվել է գնումների պաշտանական տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում կատարված գործողությունների ամբողջ ժամանակահատվածում Ընկերության կողմից պաշտոնական որևէ գրություն, առարկություն, հարցադրում կամ պարզաբանում չի ներկայացվել:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է հետևյալը.

1. Վերելակի հորանի կառուցման (վերելակի տեղադրումով) աշխատանքներն իրականացվելու են պայմանագրի նախագծով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի շրջանակներում՝ պահպանելով համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերի պահանջները.

2. Եթե շինարարական աշխատանքների կատարման ընթացքում փաստացի կարձանագրվի և կհիմնավորվի, որ նախահաշվով նախատեսված ծավալները չեն համապատասխանում նախագծային փաստաթղթերով սահմանված ծավալներին, ապա կնքված պայմանագրում կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ՝ պահպանելով գնումների և համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերի պահանջները.

3. Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև սույն թվականի հունիսի 18-ը ներառյալ, պայմանագիր չստորագրելու, պատվիրատուին պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում Ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից.

4. Պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում, Ընկերության տվյալները կտրամադրվեն լիազորված մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերությանը զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.06.2019թ. թիվ 09/712 գրությունը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ն հրաժարվել է «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Միաժամանակ անդրադառնալով Ընկերության կողմից հայտնած դիրքորոշմանը, հայտնում եմ, որ Պատվիրատուն պայմանագրի նախագծին կից Ընկերությանն ուղարկել է www.gnumner.am կայքում դեռևս 08.05.2019թ. հրապարակված «ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից հրապարակված կատարվելիք աշխատանքների նույն ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև հետագայում Պատվիրատուն Ընկերությանը կրկին տեղեկացրել է, որ վերելակի հորանի կառուցման (վերելակի տեղադրումով) աշխատանքներն իրականացվելու են պայմանագրի նախագծով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11051-2019 գրությամբ «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լ.Ա.Պ.Ա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**